

### ՄԱՏՆԵՎՈՒԹԻՒՆ ԵՍՏՆԵՍ

#### Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Առաջիկայ Պատմութեանս Վրաց, զորոյ հրատարակել առնու մք զայս առաջին նուագ զքնա. զիրն 'ի Բագմամիպիս, ոչ է յայտ թէ ով եկաց մատենագիր, թէ և 'ի բագմաց հաւաստի' թարգմանութիւն լինել երկատիրութեանն Չուանչերի (Չուանբերի) Վրաց պատմչի, որ եկաց առ ժամանակօք, որպէս թուի Արշիլ ԲՅ (688-718), զի և յիշատակի անուն նորին 'ի պատմութեանս. քանզի յետ յառաջ ածելոյ զվկայտկան կատարած Արշիլ ԲՅ, յաւելու. «Եւ գտաւ պատմութիւնս համառօտ 'ի ժամանակս շիրոթմանն, և եգաւ 'ի գիրքս' որ կոչի Քարբրիս Ռիտրեպա, որ է Պատմութիւն Քարթլոյց <sup>1</sup>. և եգիտ զսա Չուանբեր <sup>2</sup>, զրեալ մինչև ցվ' օրինակ թագաւոր <sup>3</sup>. և մինչև ցայս վայր ի կնքն յաւել Չուանբեր, և զգարոցն՝ յանձնեաց տեսողացն և պատահելոցն 'ի ժամանակին »: Արդ, ըստ այսմ վկայութեան հնութիւն գրոցս ելանէ մինչև ցարս Է-Ը. իսկ թարգմանութիւն նորին 'ի հայունս' ոչ կրսեր քան զգարն ԺԳ. քանզի յիշատակի սա՝ 'ի պատմագրութեան Ստեփանոսի Ուռպելեանս <sup>4</sup>, որ եկաց յաւուրս Գրիգորի Անաւարդեցոյ, 'ի վերջ կոչս ԺԳ դարու. որպէս և յոնոյ շարագրութեանն երեւի շինել երկուցոցն քան զԺ-ԺԱ. դարս: Յիշատակեալ գտանմք և միս ոչլ պատմութիւն Վրաց՝ անյայտ առ մեզ, 'ի բառարանին Ստեփանոսի Կամենիցացոյ, որ և երեւի գատ յայտմանէ լինել <sup>5</sup>: Որիչ է սա և 'ի գիտոյ անտի պատմութեան Վրաց, հրատարակելոյ 'ի Մատրաս Հնդկաց 'ի 1775, և 'ի Սէն-Մարգրենէ յեղոյ 'ի գաղղիերէն, զոր և վրիպակաւ, ըստ Սոմայեանի, ընծայեալ է Ստեփանոսի Ուռպելեանս: Երկուս ևեթ գիտեմ օրինակս այսր հայերէն թարգմանութեան յիշատակեալ առ բանասէրս, զմինն 'ի ԺԺ Ճառքնտրի վանացս, որ է ընդօրինակեալ 'ի 1830 ամի՝ 'ի հին բոլորագիր անթուական օրինակէ, գտելոյ յայնժամ առ Կարապետ վարդապետի առաջնորդին Կարնեցոց, և զերկրորդ՝ զգտեայն 'ի Պրոսէէ 'ի վանս Էմիսածնի, զրեալ ըստ վկայութեան նորին. 'ի միջոց ժամանակի ամացն 1279-1311, Եւ զի յերկուսին ևս օրինակսն՝ պատմագրութեանն հասեալ մինչև ցամե 1125, վճարի նովին թերատ բառիս նստոց... մարթ է կարծել թէ գուցէ և թարգմանչին շիցէ աւարտեալ զթարգմանութիւնն, և կամ զի մի և նայն լեալ իցէ բնագիր երկուց օրինակացս՝ յընդօրինակողէ իսկագրին թերի թողեալ. բայց այս որպէս և իցէ, յայտ է զի յամեն 1125, յորում թերի մնայ պատմութիւնն, մինչև ց1279-1311, յորում ժամանակի եղև օրինակութիւն ձեռագրին, շէր մարթ մասին պակասելոյ այլ ևս ընդարձակ ժամանակաւ յաւալ խաղալ 'ի պատմագրութեանն:

Բազմազմուտն միայնի պատմութեանց՝ Պրոսէ, 'ի թարգմանութեան անդ իւրում Քաղուածոյ պատմութեանն Վրաց 'ի Վախթանգէ, և ից և զվերս զայս 'ի գաղղիերէն, զեանդեալ ծանօթութեամբք 'ի Գուելուածան՝ յերրորդում հատորի, խորագրաւ Chronique arménienne, յորմէ և մեք 'ի ծանօթութիւնս աստ ուրեք ուրեք 'ի մէջ բերմք զկարևոր գիտելիս: Դարձեալ և յառաւելագոյն պարզութիւն գրոցս, խորհնցոք զպատմութիւնս զայս 'ի զլուխ հասանել, և 'ի սկզբան իւրաքանչիւրոցն կարգել 'ի համառօտի գրուլանդակութիւնս նոցին, որպէս յառաջիկայք տեսանի:

Հ. Ա. Թ.

1 Վիրք՝ Քարթլի անուանեն զիբեանս, յանուն Քարթլի նախնայն իւրեանց՝ եղբոր Հայկոյ:  
 2 Չուանչերի Չուանչերեան, ըստ վկայութեանն Չուպելեանի (Պատմ. Վրաց. Մաս Բ.), եր 'ի սերբնդեան Կիրոնի աղբոյն, որքէ Միհրանայ, ամուսնացեալ ընդ միտս 'ի Թոռանց (ըստ Պրոսէի՝ 'ի գասերաց) եղբոր երանելոյն Արշիլ ԲՅ, որ և ժամանակակից վերջնայս՝  
 3 զրեալ և զվկայական կատարած նորին:  
 4 Վախթանգ Ա, որքէ Միհրանայս Եր (446-499):  
 5 Եւ Կնէն ցոյս Լուր, պարսեան մինչև ցամե 718, յորում մուռա Արշիլ ԲՅ:  
 6 Տղագրեալ 'ի Մոսկուա, 1861, էջ 272:  
 7 Բագմամեալ 1852:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ Ր Ա Ց

Գ Լ Ո Ւ Ի Ս .

Յաղագս սերնդոցն թորգուայ արեւոյ՝ ՚ի վերայ երկրի գիւնի կործանման աշտարակին . — Սնուսեր որեցունց որոցոց նորին և սուսմանք ժառանգութեանն եղին . — Յաղագս Հայկոյ և սպանման Ներքուփայ . — Յաղագս ֆարքրոսայ և հնգեցունց որոցոց նորին . — Յաղագս Մջիկերայ քայի և երից որոցոց նորս . — Պատասկոտմն տանն ֆարքրի բնուակի խոտփորեմք , և յաղագս մեծանալոյ Մջիկերոս քաղաքի . — Յաղագս փոխերոյ կրօնից ստատածպաշտութեանն ՚ի բնապաշտութիւն :

Յիշատակ արասցուք այսմ՝ զի Հայրոց և Վրաց և Ռանայ<sup>1</sup> և Մովկանաց և Հեւրանաց և Լեկաց և կովկասեաց և Եգեբուրաց հայր՝ մի էր սոցա , թորգում կոչեցեալ , որդի թիրասայ , որդւոյ Գամեբայ , որդւոյ Յաբեթի , որդւոյ Նոյի<sup>2</sup> . և էր նա այր քաջ և հակայ : ՚ի յայսմ<sup>3</sup> կործանման աշտարակին և բաժանմանն լեզուայն , և ՚ի սփռիլն մարդկանն ՚ի վերայ երկրի , եկն բնակեցաւ ՚ի մէջ լե-

ւանց Մասնաց և Ուրագածու . որոյ էին բազում կանաչք . և ծնան նման ուստերք և դատելք որդւոց և դատերաց նորս . և եկաց ամս վիցյարիւր : Եւ չբաւեր երկիրն բազմութեանն ախի նորս . վասն որոյ տարածեցան և ընդարձակեցին զսահմանս իւրեանց ՚ի ծովէն Պսնասու մինչև ՚ի ծովն Հերեթայ<sup>4</sup> և կասպից , և աւ լերամբն կովկասու :

Եւ ընտրեցան յորդւոց նորս արքութիւն արիւազոյնք և անուանիք . առաջինն Հայկն , երկրորդն ֆարթլոս , երրորդն Բարդոս , չորրորդն Մովկան , հինգերորդն Լեկան , վեցերորդն Հեւրոս , եօթներորդն կովկաս , ութերորդն Եգրէս : Եւ Հայկն առաւել էր ուժով և քաջութեամբ , որ չեղև նման նմա ՚ի վերայ երկրի , ոչ յառաջ քան զՎրացեցն և ոչ յետոյ՝ մինչև ցայսօր ժամանակի : Սոցա բաժանեաց թորգում զաշխարհն իւր . ետ զկէսն<sup>5</sup> Հայկին , և ըզկէսն եւթմանց որդւոյն՝ ըստ արժեւոյ նոցա<sup>6</sup> . Չմմակային<sup>7</sup> աշխարհ հիւսիսոյ՝

1 Ռանեանք՝ են Աղուանք , ըստ Վրաց կոչման , որք և զաշխարհն կոչեն Ռանի , որ է Առանն Պարսկաց և Ռան կոչումն Արարաց , որոյ օտմանք էին ՚ի հարուայ՝ Երասի և Աուր , յորև մտից՝ Ալագան , ՚ի հիւսիսոյ Աերանեան թեք Աովկասու , և յորևնից՝ ծովն կասպիական : — Աղուանն և զԼեկս (այժման Լեզիկ) իջէ և ինքն Սորենայի յաշխարհագրութեանն իւրում ընդ 80 զանազան տղաքս բնակեցուց ՚ի Աովկաս , զոր ինքն Սարմատիս կոչէ . առաւել ՚ի Պաղմկայ : Իսկ Ագրեացիք են այժման Միկուէք :

2 Բազմաշինթ թարածայնութեամբ անուանց և թուոց և անձանց ընծայելն նսնին պատմագիրք զկարգ սեւեռոց որդւոցն Նոյի , իւրաքանչիւր ոչ գորցնս զինի գնալով սեփական ասան գութեանն իւրումն սղգի . ամանց սի ՚ի սեղի միւսանց փոխանակելով զաւանդեալս ՚ի Ս . Գրոց , այլոց յաւելլով նորաձայն և օտար անուանն և անձինս , և կիսոց նուագոյնցանելով զայն և կամ իսպառ խառնակելով և զթիւ և զկարգ և զանձինս Արգ զի մի ՚ի սաղաուկ ընթերցանեւ լնայ կրկնիչ ունիցիլի երկայնաբանութեամբ զսոս ՚ի բազմաց ՚ի բազում սեպես քայիկ քննութեամբ աւանդեալս զայսցանէ , ստիպ միոյն զի զրիչ պատմութեանն համաձայն ընդ Սորենուս ցլուն զթիրաս որդի քնի Գամերայ՝ որդւոյ Նոյի :

մինչեւ ՚ի Ս . Գիրս՝ Թիրաս ևս որդի անուանի Յարեթայ և եղբայր Գամերայ . և վերջոյս որդի աւանդի թորգումս՝ Գարձնալ և ըստ Վարդանայ պատմիչի վերք սեբեալ համարին ՚ի Թարջուայ՝ որդւոյ Յարեթի . մինչեւ ՚ի Ս . Գիրս թարջու որդի ասի Յաւանայ՝ որդւոյ Յարեթի : Այ անչաւտս ինձ թուի յայլմէ իմն անձանթմեզ ՚ի հնաւանդ աղբերէ քաղելոյ վիպագրոց ազգիս մերոյ և Վրաց զշաջորդութեան կարգ նախահարց , օտար սուսագութեանց Ս . Գրոց : Գիտելի է զարձակ զհնաւանդի երկի եթէ բազմաց կարգեալ իցէ ՚ի թիւս նահապետաց և զերկրորդ սերունդս Նոյնն , որով ևս առաւել գտնուան համառուս զինձինն , մանաւանդ եթէ զերկրեւն համառուսք լնալ իցեն ընդ աւանդինս : — Տես զայսցանէ լիովին ՚ի բազմահաւուս Սրբազանն աշխարհագրութեան Պաշարի . Փայլի կամ Մասն առջին :

3 Այսպէս յորինակին . Թերևս ՚ի ծառ :  
 4 Չի՛նչ այլ արդեօք մարթ իցէ իմանալ յանուանէ Լեբեթուս ծովու , բայց ՚ի ծովէն Վրկանայ :  
 5 Յօր . ցիւն :  
 6 Վասիթանդ , և ըստ կարգի երեցութեանն :  
 7 Այսպէս հիւսիսոյ երկիր սուրև կամ ծովային կոչեն վերք .

եա քարթլոսոյ, յարեւից Բերդաճոյոյ գետովն, և յարեւմտից Պոնտոսի ծովն, և 'ի ծմակային կուսէ առ լեւամբն կովկասու, առ կլարձովք և Տայովք մինչև ցլեխա՝: Եւ Բարտոսոյ ետ 'ի նոյն գետոյն Բերդաճոյոյ առ կողմամբն կուր գետոյ՝ մինչև ցծովն, որ մտաննն 'ի նա Էրասխ և կուր գետ միաւորեալք. սա նախ շինեաց գբաղաքն Պարտաւ՝ ա նուամբն իւրով: Իսկ Մովկանոյ ետ 'ի կուր գետոյ առ կողմամբն հիւսիսոյ առ գլխովն Ալագանոյ՝ մինչև ցծովն մեծ. և նա շինեաց զՄովկանէթ քաղաք: Եւ ետ Հերոսոյ 'ի գլխոյն Ալագանոյ մինչև ցլեխն Մայրոյ, որ այժմ՝ կոչի Գաղղաղա. և նա շինեաց քաղաք 'ի խառնուրդս երկուց գետոց, և յանուն իւր անուանեաց Հերեթի՝ և անուն տեղոյն այժմ՝ ասի Խորանթայ: Իսկ Էգրոսոյ ետ յականէ՛ 2 ծովուն՝ առ Լիխաւք, մինչև ցծովն արեւմտից՝ առ գետովն Խազարեթոյ՝ ցուրանոր կցի ծովն կովկասու՝ 3. սա շինեաց անուամբն իւրով քաղաք զԷգրիս, որ և այժմ՝ ասի Բեգիա: Իսկ լեւան կովկասայ մինչև ցգետն մեծ Ղուճեկ՝ էր անմարգաձայն, ետ զայն երկուց որդւոց իւրոց կովկասայ և Լեկանայ՝ 4, որք և անուամբ՝ նոցա կոչեցան մինչև ցայսօր:

Իսկ Հայկն զՀասարակն ժառանգեաց հայրենիս՝ ասացեալ սահմանզն. և էր իշխան եւթանցն եղբարց, և կային 'ի ծառայութեան Ներբովթայ հսկայի, որ նախ իագաւորեսոյ ամենայն երկրի: Իսկ զինի սուղ ամաց անցելոց՝ 'ի մի հաւաքեաց Հայկն զեղբարս իւր, և ասացնոցա. Լուարուք ինձ, հարազատք իմ. ահաւասիկ ետ մեզ Աստուած զօ-

րութիւն և ժողովուրդ բազում. և արդ՝ վասն ողորմութեանն որ 'ի վերայ մեր՝ մի ծառայեսցուք օտարի, այլ Աստուծոյ ճշմարտի: Եւ հաւանեցան ամենեքեան, ապստամբեալ՝ չետուն զհարկն, արկեալ յինքեանս զըջակայ ազգան: Եւ լուեալ Ներբովթայ՝ բարկացաւ, և արար ամբոխ բազում հսկայից և խառնադանջից, և դիմեաց 'ի վերայ նոցա, և եկն յԱտրպատական յաշխարհն: Եւ Հայկն կայր իւրայովքն առ ոտն Մասեաց. և առաքեաց Ներբովթ վաթսուն հսկայ՝ յուրովից բազմութեամբ. և խառնեալք 'ի միմեանս՝ ահագին և սաստիկ բախմամբ իբրև զձայն որոտմամբ ամբոց. և եղնն կոտորուած յերկիցունց կողմանցն անթիւ և անհամար: Եւ Հայկն կայր յետուստ կողմանէ իւրոյն, և սրտայնդեալ քաջալերէր. և ինքն իբրև ղչայքձակն ասպատակէր շուրջանախի, և ընկնոյր զհսկայան վաթսուն՝ զորքն իւրեանց մինչև խապա, եւթանքին հարազատովքն ողջ մնացեալ շնորհզն Աստուծոյ, և փառք տային փրկողին իւրեանց ամենակալի: Եւ լուեալ Ներբովթ՝ խռովեցաւ յոյժ, և դիմեաց ինքնին 'ի վերայ Հայկին: Իսկ նա ոչ ունելով զօրս իբրև զնորայն, ամրանայր 'ի դերբուկս ձորոյն Մասեաց: Իսկ Ներբովթայ սպառազինեալ կուռ վառեալ յերկաթոյ յոտիցն մինչև ցգազայթն՝ երանէր յոստ՝ 5 մի բլրոյ, կոչէր զՀայկն յառաջին հնազանդութիւնն: Իսկ Հայկն ոչ ետ պատասխանի նմա, այլ առէ ցեղբարսն իւր. Ամրացուցէք զիս յետուստ կողմանէ, և իջանեմ ես առ Ներբովթ: Եւ ինքն երթայր մերձեանայր առ նա, և նետիւ հարկանէր 'ի

մեծ՝ որ Թափի 'ի ծովն Գարբանդայ (ծովն Վերկանոց կամ Վարդից)՝ զեանդեաց Թորգոմ զերկոսն հսկայոն զԼեկան և զՎովկաս 6:

6 Գոր. յգ. ըստ որում ունի և Թարգմանութիւն Պրոսէի, 'ի՛ avança au pied d'un plateau, որոյ վերիակ լինել ոչ միայն 'ի նշանակութեանն եւնէ բայի, այլ և անտի իսկ է յայտ՝ զի ոչ յոք այլ յոք կայ եգեալ, որ յայտնի Թերութիւն է ընդօրինակային: Մինչդեռ նոյն ինքն 'ի սրտամութեանն Վալթմանդայ գայն զայս բան Թարգմանէ՛ այսպէս. Il monta sur une hauteur pour parler à Haos.

1 Աղղաղայոյն ևս ցլեխս, որպէս փոքու սարսեգրէ — Լիխաս:

2 Գոր. յգ. 24. իմանալն յանկնէ ծովան:

3 Խառնակ Թուրք բայաարութիւնք. Թերես յաւէ լի ին ծով ընդ Կովկաս, ծովն՝ զոր օրհմորէց ասէ, այն է Ալաւ ծով:

4 Այսպէս ունի զայս բան՝ Քաղաւաճոյ պատմութիւնն Վրաց 'ի Վաթիթանոց, ըստ Թարգմանութեանն Պրոսէի. 6 Այլ հիւսիսային մասնն Վովկասու՝ ոչ անկանէր 'ի բաժնին Թորգոմայ, զի ամենեկն անմարգէ էր վայրն. յայտ՝ անպատակաւ, որ 'ի Վովկասայ ձգի մինչև ցգետն

վերայ տախտակաց սրտին, և շեշտակի անցուցանէր թափ 'ի լյայանցոյցս արեւ պակնացոյցս, և շրջեալ առժամայն փչէր զշունչն. և անկեալ բոլոր բանակն իւր, և տունն թորգոմայ յանհոգս եւ զեալ հանգչէին. և թագաւորէր Հայկն եղբարց իւրոց, և ամենայն եզրակաւ նացն ազգաց <sup>1</sup>:

Իսկ ֆարթլոսայ զնացեալ 'ի լեւոն որ կոչի Ամրազ, և անդ շինեաց իւր տուն և ամրոց, և ամենայն ախարհ նորա կոչեցաւ անուանք նորա ֆարթլա, 'ի խունանայ մինչև 'ի ծովն Սպերոյ. նա շինեաց զՈրբէթ, որ արդ կոչի Շամշոյտէ, և զաղիւսաշէն բերդն Դունան: Եւ կեցեալ ամն բազում վախճանեցաւ, թողեալ հինգ որդիս քաջս. զՄցխեթա, զԳարդբոս, զԿախոս, ըզկողբիս <sup>2</sup>, զԳաջիս:

Եւ Մցխեթոս էր աւագ նոցա. սա թաղեաց զհայրն իւր 'ի գլուխն ֆարթլայ 'ի լեւոն Արմազ: Եւ կինն ֆարթլոսայ շինեաց զՄայրաբերդն <sup>3</sup> և զքաղաքն որ կոչի Ռիշա, որ է Պարտիզաքաղաք: Եւ բաժանեաց հնգից որդւոցն զաշխարհն ամենայն: Գաջէոսն շինեաց ըզԳաջէն քաղաք, և կախոս շինեաց ըզՉէլթ և զԿախէթ, և Մցխեթոս շինեաց զՄցխիթա քաղաք, և իշխէր չորից եղբարցն: Եւ եղն սմա երեք որդիք աւուանիք, Օփլոս <sup>4</sup>, Օձրխոս, Զաւախոս, որոց ետ զերկիր ժառանգութեան իւրոյ: Օձրխէ շինեաց երկու բերդաքաղաք, զՕձրխէ և զԹուխրսի: Եւ Զաւա-

խոս շինեաց երկու զիւզաքաղաք բերդով՝ զԻրանդայ և զԱրտահան, որ նախ ասիւր ֆաջաց քաղաք: Եւ Ռաբոս շինեաց զՌափիլոյիխէ և զՌարբիս և ըզԿասաբ. մինչ ցՏայոց դուռն սմա վիճակ կոչեցաւ Ներքին ֆարթլ: Եւ շինէին զամրոցսն թորգոմեանքն սակս երկիւղի Ներքովթականացն, որք նեղէին զնոսա վասն վրիժուց արեան նախնայն իւրեանց Ներքովթոյ, բայց ոչ կարէին յաղթել նոցա վասն միաբանութեան նոցա մինչև ցամահն Մցխիթայի:

Իսկ 'ի մեռաննն Մցխիթայի շփութեցան ամենայն տունն ֆարթլայ ընդ միմեանս, զի ոչ կամէին զՌափալոսն տիրել 'ի վերայ իւրեանց, զոր կացուցեալ էր ֆարթլոսայ <sup>5</sup> հօր իւրոյ 'ի վերայ ամենայն երկրին: Եւ անեաց մարտն ժամանակս բազումս. էր՝ զի առնէին արք իմաստունք սակաւ ինչ խաղաղութիւն 'ի մէջ նոցա, և էր՝ զի զարձեալ անկանէր խռովութիւն 'ի մէջ նոցա: Յայնժամ ապա մեծացաւ քաղաքն Մցխեթոյ, և անուանեցաւ մայր քաղաքաց տանն ֆարթլայ. և իշխանն որ նստէր անդ՝ տանուտէր <sup>6</sup> կոչիւր աւմենայն երկրին. ոչ թագաւոր և ոչ նախարար և ոչ այլ ինչ անուն պատուոյ զնէին 'ի վերայ նորա: Յետ որոյ և մուսացան զՄատուած զարարիչն իւրեանց, և պաշտէին զարեգակն և զլուսին և զեօթն <sup>7</sup> այլ աստեղան, և երզնուին 'ի գերեզմանն ֆարթլոսայ հօր իւրեանց <sup>8</sup>:

Շարունակելի.

1 Որպէս յայտնի երևի չիք ինչ աստանոր նաւագոյն կամ օտար յաւանդութէնց մերոյց Պատմահօր. այլ աստի և անդր գանց արարեալ զերացն Հայկայ և զվեցեցունց եղբարց նորին, առնու պատմել միայն զարարուածս ֆարթլոսի և զտերիցոց նորին:  
2 Կախոս ըստ Վրաց:  
3 Մայրաբերդ թարգմանութիւն է վրացի աւուանն Տէր-Յիւնի, որ անկանի 'ի Կախէթ նահանգի. որպէս և Պորթիզաքաղաք է վրացերէնն

Պետան-Քաթաի. իսկ Ռիշաք՝ 'ի պատմութեան Վախթանգայ Ռուսթու անուանն:  
4 Աղաղադոյն ևս Ռիշա, որպէս յղբինն:  
5 Այսինքն՝ Մցխիթայի որդւոյ ֆարթլոսայ:  
6 Վրացերէնն մահաբալու:  
7 Նիպեթեան և էթ 'ի մուլտակաց ծանօթք էին առ նախնեօք. թուի շփութեալ գրչին զե ընդ է:  
8 Այս ամենայն անգք. ըստ Պրոսէի, անկաւնին յամեն 2267 կամ 2226 աշխարհի: